

ԱՌՌԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ AT-AU-083-23

ք. Երևան
12 հուլիսի 2023թ.

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Աուդիտոր»,
ի դեմս տնօրեն Արմեն Հովհաննիսյանի, որը գործում
է ընկերության կանոնադրության հիման վրա, մի
կողմից,

և

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը,
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գործադիր
տնօրեն Նունե Ղազախեցյանի, որը գործում է
կազմակերպության կանոնադրության հիման վրա,
մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»)
կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝
Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Սույն Պայմանագրով Աուդիտորը
պարտավորվում է մատուցել Պայմանագրի 1.2.
կետում նշված ծառայությունները (այսուհետ՝
Ծառայություններ), իսկ Պատվիրատուն
պարտավորվում է ընդունել ծառայությունները և
վճարել այդ ծառայությունների համար:
- 1.2. Ծառայությունները ներառում են
Պատվիրատուի կողմից 22.12.2022-21.12.2023
թթ. ժամանակահատվածում ՀՀ-ում
Ճապոնիայի դեսպանատան կողմից
ֆինանսավորված «Գարգառ բնակավայրում
խմելու ջրամատակարարման համակարգի և
հանրակրթական դպրոցի վերանորոգում»
դրամաշնորհային ծրագրի (այսուհետ՝
«Ծրագիր») աուդիտը:
- 1.3. Սույն Պայմանագրի 1.1 և 1.2 կետում
չնշված այլ ծառայությունները, որոնք
կհամաձայնեցվեն Կողմերի միջև և կդառնան
Աուդիտորի կողմից մատուցման
ենթակա, կդիտվեն որպես
լրացուցիչ ծառայություններ:
- 1.4. Լրացուցիչ ծառայությունների
մատուցման անհրաժեշտության դեպքում
Կողմերը կնքում են առանձին
համաձայնագիր:

CONTRACT N AT-AU-083-23 FOR PROVISION
OF AUDIT SERVICES

Yerevan
12 July 2023

"Grant Thornton" CJSC, hereinafter referred to as
"the Auditor", represented by Armen
Hovhannisyan, Director, acting in accordance with
the Charter of the company, on one part,

and

Urban Foundation for Sustainable Development,
hereinafter referred to as "the Client", represented
by Nune Ghazakhetsyan, Executive Director,
acting in accordance with the Charter of the
organization, on other part, (both hereinafter
referred to as "the Parties") have entered into this
contract, hereinafter also referred to as "the
Contract", as follows:

1. SUBJECT OF THE CONTRACT

- 1.1. Under this Contract the Auditor undertakes
to perform the services mentioned in
paragraph 1.2. hereof and the Client
undertakes to accept the services
(hereinafter referred to as "the Services")
and pay for them.
- 1.2. The services shall include the audit of the
Project "Renovation of Drinking Water
Supply System and Public School in Gargar
village" implemented by the Client within the
Japan embassy grant for 22.12.2022-
21.12.2023 period (hereinafter referred to
as "the Project").
- 1.3. Any other services not mentioned in
paragraph 1.1 and 1.2 hereof, which will be
agreed between the Parties and will be
subject to be provided by the Auditor, shall
be considered as additional services.
- 1.4. In case additional services need to be
provided, the Parties shall conclude a
separate agreement.

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1. Ծառայությունների մատակարարումը սկսվելու է Ծրագիրը ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից բարեգործական որակելուց հետո: Պատվիրատուն Աուդիտորին է տրամադրում ՀՀ փոխվարչապետի որոշման օրինակը, որով ծրագիրը համարվում է բարեգործական:

2.2. Ծառայությունների մատուցման ավարտը և Պատվիրատուի կողմից դրանց ընդունման հանգամանքը հավաստվում են Ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտի երկկողմ ստորագրմամբ:

2.3. Պատվիրատուն պետք է ստորագրի հանձնման-ընդունման ակտն այն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԱՌՒԴԻՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Ծրագրի՝ ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ աուդիտորական ծառայությունների մատուցման ավարտից հետո Աուդիտորը Պատվիրատուին է ներկայացնում աուդիտորական եզրակացություն և անհրաժեշտության դեպքում՝ աուդիտորական հաշվետվություն (նամակ ղեկավարությանը)՝ անգլերենով: Աուդիտորական եզրակացությունը պատրաստելիս Աուդիտորը պետք է հիմք ընդունի Պատվիրատուի կողմից ներկայացված աուդիտորական եզրակացության օրինակելի ձևը:

3.2. Մինչև Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերի հաստատված՝ ստորագրված և կնքված տարբերակները Պատվիրատուին տրամադրելը Աուդիտորը տրամադրում է վերոհիշյալ փաստաթղթերի նախագծերը՝ դրանց վերաբերյալ Պատվիրատուի նկատառումները ստանալու նպատակով: Պատվիրատուն իր նկատառումները Աուդիտորին պետք է ներկայացնի վերոնշյալ փաստաթղթերի նախագծերն ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Հաստատված աուդիտորական եզրակացությունը և հաշվետվությունը Աուդիտորը Պատվիրատուին է տրամադրում վերջինիս նկատառումներն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Աուդիտորի կարծիքի արտահայտման

2. SERVICES PROVISION SCHEDULE

2.1. The provision of services will commence after qualifying the Project as charitable by the Advisory Commission on Coordination of Charitable Programs of the Government of the Republic of Armenia. The Client provides the Auditor with a copy of the RA Deputy Prime Minister's decision, by which the program is considered charitable.

2.2. The completion of the provision of Services and their acceptance by the Client shall be confirmed by execution of an acceptance act on the Services signed by the Parties.

2.3. The Client shall sign the acceptance act within 3 (three) working days after its receipt.

3. AUDIT DOCUMENTATION

3.1. Upon completion of the provision of the Services in connection with the financial statements of the Project, the Auditor shall submit the audit report and if necessary, the management letter to the Client in English. For the purpose of the audit report preparation the Auditor shall take as a basis the model of the audit report submitted by the Client.

3.2. Prior to the provision of the approved (signed and sealed) documents specified in paragraph 3.1 hereof to the Client the Auditor shall present draft of the abovementioned documents to the Client to obtain the latter's comments thereon. The Client shall present any comments to the Auditor within 5 (five) working days upon receipt of the abovementioned documents. The Auditor shall present to the Client the approved report and the management letter within 5 (five) working days upon the receipt of the comments.

3.3. The Auditor's ability to express an opinion,

հնարավորությունը և աուդիտորական եզրակացության ձևակերպումը լիովին կախված կլինեն Աուդիտորի կողմից աուդիտորական եզրակացության կազմման օրվա դրությամբ առկա փաստերից և հանգամանքներից և նրա կողմից իրականացված աուդիտորական ընթացակարգերի արդյունքներից: Նման ընթացակարգերի ծավալն ու բնույթը որոշվում են Աուդիտորի կողմից՝ իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները:

3.4. Եթե աուդիտորական եզրակացությունը տրվելու է վերապահումներով, ապա վերապահումների պատճառները Պատվիրատուի հետ պետք է քննարկվեն մինչև աուդիտորական եզրակացության տրամադրումը:

4. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների գինը կազմում է 800,000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի, եթե Պատվիրատուն Աուդիտորին է տրամադրում 2.1. կետով ամրագրված որոշումը: Հակառակ դեպքում՝ ծառայության արժեքի նկատմամբ հաշվարկվում է 20% ԱԱՀ եւ այն կազմում է 960,000 (ինը հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

4.2. Սույն Պայմանագրի 4.1. կետով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը Պատվիրատուն վճարում է Աուդիտորին երկու փուլով.
առաջին փուլ՝ 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ Ծրագիրը ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կողմից բարեգործական որակելուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:
երկրորդ փուլ՝ 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ աուդիտի ավարտման՝ ծառայությունների կատարման ակտի հաստատման օրը, իսկ որոշման օրինակը չներկայացնելու դեպքում երկրորդ փուլի գումարը կազմելու է 560,000 (հինգ հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ:

and the wording of the audit report, will entirely be dependent on the facts and circumstances at the date of the audit report and on the results of the audit procedures which the Auditor performs. The nature and extent of such procedures are to be solely determined as the Auditor deems appropriate under the circumstances.

3.4. If the audit report is other than unqualified, the reasons for qualifications shall be discussed with the Client prior to the issuance of the audit report.

4. TERMS OF PAYMENT

4.1. The price of the Services under this contract is 800,000 AMD (eight hundred thousand), excluding VAT, provided that the Client provides the Auditor with the decision as set in clause 2.1. In the absence of the decision, a 20% VAT will be calculated on the Services' value, resulting in a total of 960,000 AMD (nine hundred and sixty thousand), including VAT.

4.2. The total fee for the Services as set forth in paragraph 4.1. hereof shall be paid to the Auditor in two stages:
first stage: to pay the AMD 400,000 (Four Hundred Thousand) within five working days after the Project is qualified as charitable by the Advisory Commission on Coordination of Charitable Programs of the Government of the Republic of Armenia.
The second stage – to pay the AMD 400,000 400,000 (Four Hundred Thousand); on the day of the completion of the audit, upon approval of the service performance act. In case of not submitting the copy of the decision, the amount of the second stage will be 560,000 (five hundred and sixty thousand) AMD.

4.3. Սույն Պայմանագրով չնախատեսված լրացուցիչ ծառայությունների մատուցման նպատակով Աուդիտորի մասնագետների կողմից փաստացի ծախսված ժամերը պետք է որոշվեն վերջիններիս կողմից լրացված և Պատվիրատուի կողմից հաստատված ժամանակացույցերի հիման վրա: Աուդիտորի մասնագետների ժամային դրույքաչափերը որոշվում են ներքոնշվալ կարգով:

Պաշտոն	Ժամային դրույքաչափ, ՀՀ դրամ
Բաժնետեր	45,000
Խմբի ղեկավար	25,000
Ավագ աուդիտոր	20,000
Աուդիտորի օգնական	10,000

Դրույքաչափերը չեն ներառում ԱԱՀ-ն, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ ծախսեր, որոնք կարող են առաջանալ տրանսպորտի և օրապահիկների հետ կապված:

4.4. Եթե Աուդիտի Միջազգային Ստանդարտների պահանջներին համապատասխան և Կողմերի միջև ծագած անհամաձայնությունների վերացման անհնարինության դեպքում, Աուդիտորն ի վիճակի չէ ավարտել աուդիտն, ապա որևէ փաստաթուղթ չի տրամադրվի սույն Պայմանագրի արդյունքում, որպիսի փաստը կդիտվի Աուդիտորի՝ սույն Պայմանագրի 3.1. կետում նշված փաստաթղթերը տրամադրելու պարտավորության դադարում:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Աուդիտորն իրավունք ունի.

- 5.1.1. Ծառայությունների մատուցման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել Ծրագրին առնչվող բոլոր հաշվապահական փաստաթղթերը, ինչպես նաև ստուգել դրանցում հաշվառված միջոցների յուրաքանչյուրի առկայությունը,
- 5.1.2. Պատվիրատուի պաշտոնատար անձանցից ստանալ Ծառայությունների մատուցման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ,
- 5.1.3. Պատվիրատուի համաձայնությամբ գրավոր հարցումներ ուղղել երրորդ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար՝ արժանահավատ եզրակացություն կազմելու նպատակով.

4.3. For provision of additional services not specified hereunder actual hours incurred by the Auditor's specialists shall be determined based on timesheets completed by the Auditor's specialists and confirmed by the Client. The hourly rates of the Auditor's specialists shall be determined as indicated below:

Position	Hourly rate, AMD
Partner	45,000
Team leader	25,000
Senior auditor	20,000
Audit assistant	10,000

The rates are exclusive of VAT and any additional expenses that may incur in connection with transportation and per diems.

4.4. If due to the requirements of the International Standards of Auditing and in case of inability to eliminate disagreement between the Parties, the Auditor is unable to complete the audit, no deliverable will be issued as a result of the present Contract; such a fact shall be considered as termination of Auditor's obligation to issue deliverables indicated in paragraph 3.1. hereof.

5. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

5.1. The Auditor shall have the right to:

- 5.1.1. fully review all accounting documents related to Project, as well as to check the availability of each asset recorded during the provision of Services;
- 5.1.2. request from the Client's officials any verbal and written explanations and other necessary information pertaining to the issues arising out of the provision of the Services;
- 5.1.3. send, upon the consent of the Client, written inquiries to the third persons in order to receive necessary information in the manner prescribed by RA Legislation aimed to prepare a reliable report;

- 5.1.4. Ծառայությունների մատուցման համար ներգրավել անհատ աուդիտորների և/կամ այլ մասնագետների,
- 5.1.5. Պատվիրատուի կողմից տեղեկատվություն չներկայացնելու կամ Ծառայությունների պատշաճ մատուցմանը խոչընդոտելու դեպքում հրաժարվել եզրակացությունը և հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) տրամադրելուց և միակողմանի լուծել Պայմանագիրը:
- 5.2. *Աուդիտորը պարտավոր է.*
- 5.2.1. բարեխղճորեն և ժամանակին մատուցել Ծառայությունները,
- 5.2.2. ապահովել Ծառայությունների մատուցման ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի պահպանումն աուդիտորական ծառայությունների մատուցմանը հաջորդող 5 (հինգ) տարվա ընթացքում,
- 5.2.3. Ծառայությունների մատուցման ընթացքում ղեկավարվել Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներով:
- 5.3. *Պարվիրատուն իրավունք ունի.*
- 5.3.1. Աուդիտորից ստանալ տեղեկատվություն աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերի և Աուդիտի Միջազգային Ստանդարտների վերաբերյալ:
- 5.4. *Պարվիրատուն պարտավոր է.*
- 5.4.1. ապահովել Աուդիտորի աշխատանքային խմբին համապատասխան աշխատանքային պայմաններով,
- 5.4.2. Աուդիտորի կողմից պահանջի դեպքում նրան ներկայացնել բոլոր հաշվապահական փաստաթղթերի բնօրինակները և դրանց վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ներկայացնել այն աշխատակիցներին, ում Աուդիտորը կարող է ուղղել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկությունների և ֆինանսական հաշվետվություններին վերաբերող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ հարցերը,
- 5.4.3. տրամադրել ներկայացուցչական նամակ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ,
- 5.4.4. չխոչընդոտել Աուդիտորի կողմից Ծառայությունների պատշաճ մատուցմանը, Աուդիտորին ժամանակին տրամադրել պահանջված տեղեկատվությունը, փաստաթղթերը, բանավոր և գրավոր
- 5.1.4. involve individual auditors and/or other experts for the provision of the Services;
- 5.1.5. refuse providing the audit report and the management letter in case if the Client does not provide necessary information or hinders the proper provision of the Services and unilaterally terminate the Contract.
- 5.2. *The Auditor shall:*
- 5.2.1. properly and timely provide the Services;
- 5.2.2. keep the documents received and compiled in the course of the provision of Services during 5 (five) years following the Audit Services;
- 5.2.3. preserve the requirements of the International Standards on Auditing.
- 5.3. *The Client shall have the right to:*
- 5.3.1. receive any information from the Auditor on RA legislation regulating the audit activities and on International Standards on Auditing.
- 5.4. *The Client shall:*
- 5.4.1. provide the Auditor's working group with proper working conditions;
- 5.4.2. upon request, make available to the Auditor all of the original accounting records and related information and personnel to whom the Auditor may direct inquiries about the representations embodied in the financial statements and the effectiveness of internal control over financial reporting;
- 5.4.3. present a representation letter covering the financial statements of the Project;
- 5.4.4. not impede the Auditor to properly render the Services and provide the Auditor with all required information, documents and verbal and written explanations in a timely manner;

- բացատրությունները,
- 5.4.5. չձեռնարկել Ծառայությունների մատուցման ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ միջոց,
- 5.4.6. ժամանակին վճարել Աուդիտորի Ծառայությունների դիմաց՝ սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն,
- 5.4.7. ձեռնպահ մնալ իր մոտ աշխատանքի ընդունել Աուդիտորի նախկին աշխատակիցներին՝ Աուդիտորի և համապատասխան աշխատողի միջև աշխատանքային պայմանագիրը դադարելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացում՝ բացառությամբ Աուդիտորի հետ նախապես համաձայնեցված դեպքերի,
- 5.4.8. ապահովել պատշաճ պայմաններ Ծառայությունների մատուցման համար, այն է՝ Աուդիտորին ներկայացնել պահանջվող գրավոր հաստատումներ իր կողմից կատարած ներկայացումների վերաբերյալ՝ կապված Ծառայությունների մատուցման հետ, այդ թվում՝ Աուդիտորի կողմից հաստատված ձևով ներկայացուցչական նամակի միջոցով: Պատվիրատուի ղեկավարության՝ Աուդիտի Միջազգային Ստանդարտների համաձայն պահանջվող վերոնշյալ հաստատումները և այլ հարակից գրավոր ներկայացումները կազմում են ապացույցների մաս, որի վրա Աուդիտորը կհիմնվի Պատվիրատուի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ իր կարծիքը ձևավորելիս,
- 5.4.9. ապահովել, որ սույն Պայմանագրի շրջանակներում ՀՀ օրենսդրության իմաստով անձնական տվյալ հանդիսացող ցանկացած տեղեկատվության՝ Աուդիտորին փոխանցման առնչությամբ առկա լինեն համապատասխան տվյալների սուբյեկտների գրավոր համաձայնությունները, որոնք պետք է պարունակեն նաև համապատասխան տվյալների սուբյեկտների հստակ համաձայնությունն Աուդիտորի կողմից նման տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ՀՀ տարածքում և/կամ ՀՀ տարածքից դուրս պահպանելու առնչությամբ, ինչպես նաև Աուդիտորի մատուցած ծառայությունների որակի և/կամ համապատասխանության ստուգման նպատակով Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի կողմից և/կամ անունից ներկայացված պահանջի հիման վրա կամ Աուդիտորի գործունեության կամ կոնկրետ առաքելության նկատմամբ վերահսկողություն իրականացնող օտարերկրյա և/կամ միջազգային կառույցների պահանջով Աուդիտորի կողմից նման տեղեկատվությունը երրորդ անձանց

- 5.4.5. refrain from any restrictive action preventing the Auditor from reviewing any relevant matters during the provision of the Services;
- 5.4.6. timely pay for the Services according to paragraph 4 hereof;
- 5.4.7. refrain from employing the Auditor's former employees within the period of 1 (one) year after the termination of the employment contract between the Auditor and the respective employee, except when there is the prior consent of the Auditor;
- 5.4.8. ensure proper conditions for the provision of Services, such as providing required written confirmations to the Auditor concerning representations (assertions) made by the Client to the Auditor in connection with the provision of Services, including by means of representation letter in the form approved by the Auditor. These confirmations and other related written representations of the Client's management required by International Standards on Auditing are part of the evidential matter that the Auditor will rely on in forming the opinions on the Project's financial statements;
- 5.4.9. ensure the availability of the written consents of the respective data subjects for transfer of any information containing personal data in the meaning of the RA legislation to the Auditor within the framework of this Contract. The given consents shall also contain the explicit agreement of respective data subjects on preservation of such information by the Auditor over the time periods specified by the RA legislation within and/or beyond the RA territory, as well as on transfer of such data to third parties by the Auditor upon the request submitted by and/or on behalf of Grant Thornton International for the purpose of checking the quality or compliance of the services provided by the Auditor, as well as upon request of foreign and/or international institutions exercising control over the activities of the Auditor or any specific engagement of the latter.

փոխանցելու առնչությամբ:

5.5. Կողմերն ունեն սույն Պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

5.5. The Parties shall have other rights and obligations prescribed by the Contract.

6. ԱՌԻԴԻՏՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

6. AUDITOR'S INDEPENDENCE

6.1. Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման առնչությամբ Աուդիտորը կձեռնարկի նպատակաուղղված միջոցներ՝ պահպանելու իր անկախությունը և ապահովելու իր գործունեության համապատասխանությունը ՀՀ և միջազգային կանոններին և կանոնակարգերին:

6.1. In connection with the provision of the Services under the Contract the Auditor shall make a focused effort to maintain independence and ensure compliance with RA and international rules and regulations.

6.2. Աուդիտորը կարող է պահանջել Պատվիրատուից վերջինիս ձեռնարկության ամբողջ կառուցվածքի, ներառյալ՝ նրա դուստր ձեռնարկությունների վերաբերյալ թարմ և ճշգրիտ տվյալներ: Պատվիրատուի ղեկավարությունը պատասխանատու է ապահովելու, որ ինքն, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման առումով իր խմբի մեջ մտնող դուստր ձեռնարկությունները, վարեն այնպիսի քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն, որ ոչ ինքը, ոչ իր դուստր ձեռնարկություններից որևիցե մեկը չի ձեռնարկի միջոցներ Աուդիտորին ներգրավելու այնպիսի ծառայությունների մատուցմանը կամ չի ընդունի նրանից այնպիսի ծառայություններ, որոնց վերաբերյալ նախնական հաստատում չի ստացվել կամ որոնք, կիրառելի ստանդարտներին համաձայն, կխաթարեն Աուդիտորի անկախությունը:

6.2. The Auditor may request from the Client accurate and current data regarding the entire corporate legal structure of the Client including Client's all subsidiaries. Management of the Client is responsible for ensuring that the Client, together with its subsidiaries that comprise the Client for purposes of the consolidated financial statements, has policies and procedures in place to make certain that neither the Client nor any such subsidiary will act to engage the Auditor or accept from the Auditor any service that either has not been subjected to their pre-approval process or that under applicable standards would impair the Auditor's independence.

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7. CONFIDENTIALITY

7.1. Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը հանդիսանում են նրա սեփականությունը: Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերում և եզրակացություններում պարունակվող տեղեկատվությունն առևտրային գաղտնիք է և ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի կամ այն դեպքերի, երբ նման տեղեկատվությունը ենթակա է բացահայտման Աուդիտորի մատուցած ծառայությունների որակի և/կամ համապատասխանության ստուգման նպատակով Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի կողմից և/կամ անունից ներկայացված պահանջի հիման վրա, ինչպես նաև Աուդիտորի գործունեության կամ կոնկրետ առաքելության նկատմամբ վերահսկողություն իրականացնող օտարերկրյա և/կամ միջազգային կառույցների

7.1. The working papers of the Auditor are the ownership of the latter. The information contained in the Auditor's working papers and statements is confidential and shall not be published except the cases specified in the RA legislation or cases where such information shall be disclosed upon the request submitted by and/or on behalf of Grant Thornton International for the purpose of checking the quality or compliance of the services provided by the Auditor, as well as upon request of foreign and/or international institutions exercising control over the activities of the Auditor or any specific engagement of the latter.

պահանջով:

7.2. Ծառայությունների մատուցման ընթացքում ստացված կամ կազմված փաստաթղթերի պատճենները կամ դրանց մեջ պարունակվող տեղեկությունները Աուդիտորը կարող է երրորդ անձանց տրամադրել կամ հրատարակել միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Աուդիտորին ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի արժանահավատության համար:

8.2. Աուդիտորն ազատվում է Պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվության չտրամադրման, կամ այդ տեղեկատվության տրամադրման ուշացման, ինչպես նաև ոչ ճշգրիտ, կեղծ կամ մոլորեցնող տեղեկությունների տրամադրման արդյունքում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար որևէ պատասխանատվությունից:

8.3. Աուդիտորը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու, ինչպես նաև հարկային պարտավորությունները չկատարելու համար:

8.4. Եթե Պատվիրատուն չի տրամադրում կամ ժամանակին չի տրամադրում Աուդիտորի կողմից պահանջվող տեղեկությունները կամ ներկայացնում է ոչ ճշգրիտ տեղեկություններ կամ ուշացնում է անհրաժեշտ փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների կամ սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների ընթացքում Աուդիտորի կողմից պահանջվող այլ տեղեկությունների պատրաստումը կամ ներկայացումը 1 (մեկ) ամիս կամ ավելի երկար ժամկետո, ապա վերոնշյալը կարող է հանգեցնել Աուդիտորի աշխատակազմի կողմից լրացուցիչ (չկանխատեսված) ժամանակի ծախսմանը և համապատասխանաբար աշխատանքի ծավալի ավելացմանը և ծառայությունների արժեքի բարձրացմանը, և/կամ ազդել սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների ավարտման ժամկետների վրա: Աուդիտորի աշխատակազմի կողմից լրացուցիչ (չկանխատեսված) ժամանակի ծախսման արդյունքում Աուդիտորի ծառայությունների դիմաց կատարվող վճարի

7.2. The Auditor may transfer copies of documents (or information contained therein), obtained or compiled in the course of the provision of the Services, to third parties or publish them only upon the Client's prior written consent or in cases and in the manner prescribed by the RA legislation.

8. RESPONSIBILITIES OF THE PARTIES

8.1. The Client is responsible for the reliability of the information and documents presented to the Auditor.

8.2. The Auditor is expressly released from any liability for the non-performance or improper performance of his obligations resulting from the provision of inaccurate, false or deceptive information, as well as non-provision or late provision of the necessary information by the Client.

8.3. The Auditor shall not be liable for any infringement of RA legislation or tax obligations by the Client.

8.4. Should the Client not have timely prepared the required information, or provide inaccurate information, or cause delays in preparing or providing required documentation, financial statements or other information requested by the Auditor in the performance of the services under the Contract for 1 (one) month term or more, this may result in additional (unforeseen) time spent by the Auditor's staff and respectively increase the volume of work and cost of the services, and/or affect the timeframe for the completion of services specified hereunder. The increase in fees for the Auditor's services due to additional (unforeseen) time spent by the Auditor's employees shall be determined in accordance with the provisions of paragraph 4.3. hereof.

ավելացումը կորոշվի՝ համաձայն սույն Պայմանագրի 4.3. կետի դրույթների:

8.5. Պայմանագրի 2.1 կետով սահմանված Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ որոշված Ծառայությունների մատուցման ժամկետների խախտման դեպքում Աուդիտորը Պատվիրատուի պահանջով վճարում է տուգանք՝ Ծառայությունների ընդհանուր արժեքի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ծառայությունների ընդհանուր արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

8.6. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված գումարները նույն կետով սահմանված ժամկետներում չվճարելու, հանձնման-ընդունման ակտը Պայմանագրի 2.3 կետով սահմանված ժամկետում չստորագրելու կամ ստորագրումից անհիմն խուսափելու դեպքերում Պատվիրատուն Աուդիտորի պահանջով վճարում է տուգանք՝ Ծառայությունների ընդհանուր արժեքի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ վճարման կետանցի դեպքում՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար կետանցված գումարի, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտը ստորագրելու համար սահմանված առավելագույն ժամկետը գերազանցող յուրաքանչյուր օրվա համար Ծառայությունների ընդհանուր արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

8.7. Տուգանքի և տույժերի վճարումը կողմերին չի ազատում իրենց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ թույլ տրված խախտումները վերացնելուց:

8.8. Աուդիտորի պատասխանատվությունը սահմանափակվում է Ծառայությունների մատուցման ընթացքում իր մեղքով առաջացած վնասների, ինչպես նաև Պատվիրատուի գործարար համբավն արատավորելու արդյունքում հասված վնասների հատուցմամբ՝ պայմանով, որ վնասների չափը հաստատված է գրավոր փաստաթղթերով: Ամեն դեպքում Աուդիտորի ընդհանուր պատասխանատվությունը սահմանափակվում է Ծառայությունների համար Աուդիտորին վճարված գումարի չափով:

8.9. Սույն Պայմանագիրը կնքվում է Պատվիրատուի և Աուդիտորի միջև, և միայն Աուդիտորն է պատասխանատվություն կրում սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար: Վերջիններս նախատեսված են միայն

8.5. In case of violation of the terms of provision of Services agreed additionally by the Parties according to paragraph 2.1 hereof, on demand of the Client the Auditor shall pay a penalty of 1 (one) per cent of the total fee for the Services, and a fine of 0.1 (zero point one) per cent of the total fee for the Services for each day of delay.

8.6. In case the Client fails to pay the fees prescribed in paragraph 4.2 within the time period stipulated therein, or without any justification avoids to sign or fails to sign the acceptance act within the time period stipulated in paragraph 2.3 of the Contract, on demand of the Auditor the Client shall pay a penalty in the amount of 1 (one) per cent of the total fee for the Services, as well as a fine of 0,1 (zero point one) per cent of the delayed amount for each day of delayed payment, as well as 0,1 (zero point one) per cent of the total fee for the Services for each day exceeding the maximum time period stipulated for signing the acceptance act.

8.7. Payment of penalties and fines shall not exempt the Parties from performing their obligations hereunder or eliminating violations.

8.8. The liability of the Auditor shall be limited to compensation of damages, sustained through the fault of the Auditor in the performance of the audit services, and also the impairment of Client's goodwill sustained through the fault of the Auditor provided, however, that the amount of damages is supported by proper documents. In any case the Auditor's total liability shall be limited to the fee actually paid to the Auditor for the Services.

8.9. The Contract is between the Client and the Auditor; the Auditor remains solely liable to the Client for the Services specified hereunder, which are intended solely for the Client and are not intended for the benefit of third parties.

Պատվիրատուի համար և ուղղված չեն երրորդ անձանց շահերին:

8.10. Աուդիտորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների մատուցման ընթացքում Աուդիտորի ներկայացրած եզրակացությունը կամ այլ խորհրդատվություն օգտագործելու կամ դրանց վրա հիմնվելու արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասների համար, ներառյալ առանց սահմանափակման՝ Պատվիրատուի դուստր ձեռնարկություններին և/կամ փոխկապակցված անձանց:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

9.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

9.2. Այն կողմը, որի համար ստեղծվել են սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման խոչընդոտներ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է ծանուցել այդ մասին մյուս կողմին այդպիսի իրավիճակի ի հայտ գալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Այդ ժամկետում անհաղթահարելի ուժի առկայության մասին չծանուցելը նման պարտավորություն կրող կողմին զրկում է անհաղթահարելի ուժի առկայությունը որպես պատասխանատվությունը բացառող հիմք վկայակոչելու իրավունքից:

9.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.10. The Auditor shall bear no liability for damages caused to third parties including, without limitation, the Client's subsidiaries and/or affiliates as a result of the use of the report submitted by the Auditor and other advice provided in the performance of the audit services or reliance thereon.

9. FORCE MAJEURE

9.1. The Parties shall be indemnified against any liability for full or partial failure to fulfil their responsibilities hereunder if such failure occurred due to an event of force majeure, which arose after the execution hereof, and which the Parties could not have reasonably foreseen or prevented. These events include: earthquake, flood, war, imposing of martial law or state of emergency, civil unrest, strikes, suspension of communications, acts of government, etc., rendering impossible performance of contractual obligations hereunder by the Parties.

9.2. Either party who has difficulties in fulfilling the obligations prescribed by the Contract due to an event of force majeure, shall notify the other party respectively within 3 (three) working days after such a situation has occurred. In case the party fails to notify within the mentioned time period, the party shall be deprived of the right to claim the existence of force majeure as ground for being exempted from liability.

9.3. When the event of force majeure continues longer than 3 (three) months, either Party shall be entitled to terminate the Contract upon prior notice thereof to the other Party.

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

- 10.1. Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Կողմերը կնքում են փոփոխությունների վերաբերյալ համաձայնագիր նույն ձևով, ինչ կնքել են Պայմանագիրը: Համաձայնագիրը դառնում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 10.2. Կողմերը կարող են ցանկացած ժամանակ փոխադարձ համաձայնությամբ լուծել Պայմանագիրը լուծման մասին համաձայնագիր կնքելու միջոցով:
- 10.3. Պատվիրատուն կամ Աուդիտորը կարող են վաղաժամկետ լուծել պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և Պայմանագրով նախատեսված հիմքերով:
- 10.4. Աուդիտորը կարող է վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, եթե՝
- 10.4.1. Պատվիրատուն թույլ է տալիս Պայմանագրի 4.2 կետով սահմանված վճարման ժամկետների խախտում ավելի, քան 10 (տասը) աշխատանքային օրով,
- 10.4.2. Պատվիրատուն չի տրամադրում Աուդիտորի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը:
- 10.5. Կողմերից յուրաքանչյուրը Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում, այդ մասին նախապես՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ, ծանուցում է մյուս Կողմին:
- 10.6. Սույն Պայմանագրի լուծման դեպքում (ցանկացած հիմքով), բացի Աուդիտորի կողմից կատարված փաստացի ծախսերի փոխհատուցումից, Պատվիրատուի կողմից Աուդիտորին կատարվող վճարը փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց որոշվում է Կողմերի կողմից՝ բազմապատկելով Աուդիտորի մասնագետների՝ սույն Պայմանագրի 4.3 կետում նշված ժամային դրույքաչափերը փաստացի մատուցված ծառայությունների ժամերի հետ: Ընդ որում, գումարը չպետք է գերազանցի սույն Պայմանագրի 4.1 կետում նշված Ծառայությունների ընդհանուր արժեքը:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- 11.1. Աուդիտորը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերի մի օրինակը, ինչպես նաև

10. AMENDING AND TERMINATING THE CONTRACT

- 10.1. The Contract may be amended upon the mutual agreement of the Parties. The Parties shall conclude an agreement on amendments in the form of the Contract. The agreement shall become an integral part of the Contract.
- 10.2. The Parties may terminate the Contract upon their mutual agreement by signing an agreement on the termination of the Contract any time.
- 10.3. This Contract may be terminated by the Client or the Auditor according to RA Civil Code and the Contract, as well as in case of non-fulfillment or improper fulfillment of the obligations by the Client or the Auditor.
- 10.4. The Auditor may terminate the Contract in case:
- 10.4.1. The Client delays the payment for the Services specified in paragraph 4.2 of the Contract for more than 10 (ten) working days;
- 10.4.2. The Client fails to provide the requested information or documents to the Auditor.
- 10.5. Each Party that wishes to terminate this Contract shall give a notice to the other Party 15 (fifteen) working days in advance.
- 10.6. Upon termination of the Contract (based on any ground), beside the reimbursement of the of the expenses actually made by the Auditor, the fees to be paid by the Client for the Services actually provided by the Auditor shall be determined by the Parties by multiplying the Auditor's specialists' hourly rates specified in paragraph 4.3 hereof and actual hours incurred in providing the Services. In addition, the amount shall not exceed the total fee for the Services mentioned in paragraph 4.1 hereof.

11. COMMUNICATION BETWEEN THE PARTIES

- 11.1. The Auditor shall hand a copy of the documents mentioned in paragraph 3.1 of

հանձնման-ընդունման ակտը Պատվիրատուին է հանձնում առձեռն՝ ստանալու մասին նշումով: Եթե որոշակի հանգամանքներից ելնելով՝ տվյալ պահին հնարավոր չէ նշված փաստաթղթերն առձեռն հանձնել, ապա դրանք ուղարկվում են Պայմանագրի 14-րդ բաժնում նշված էլեկտրոնային հասցեին՝ առաջին իսկ հնարավորության դեպքում թղթային տարբերակը Պատվիրատուին հանձնելու պայմանով: Այս դեպքում նշված փաստաթղթերի թղթային տարբերակներն ավելի ուշ հանձնելու դեպքում Ծառայությունները համարվում են ժամանակին մատուցված:

11.2. Պայմանագրով նախատեսված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև ծանուցումները ուղարկվում են Պայմանագրի 14-րդ կետում նշված էլեկտրոնային հասցեներին էլեկտրոնային հաղորդագրության տեսքով: Պայմանագրով նախատեսված համաձայնությունները կարող են ձեռք բերվել նշված էլեկտրոնային հասցեներով Կողմերի հաղորդագրությունների փոխանակմամբ:

11.3. Էլեկտրոնային հասցեին ուղարկված փաստաթղթերը կամ ծանուցումները համարվում են ստացված էլեկտրոնային հաղորդագրության ուղարկման օրը, եթե այն ուղարկվել է մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն: 16:00-ից հետո ուղարկված էլեկտրոնային հաղորդագրությունները համարվում են ստացված ուղարկելուն հաջորդող աշխատանքային օրը:

11.4. Կողմերի միջև էլեկտրոնային հասցեներով փոխանակված գրագրությունը ունի գրավոր ապացույցի ուժ և մեկնաբանվում է Պայմանագրով սահմանված դրույթների համատեքստում:

12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

12.1. Սույն պայմանագրի հետ կապված բոլոր վիճելի հարցերը Կողմերը կձգտեն լուծել բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով, առավելագույնս հաշվի առնելով մյուս Կողմի առաջարկությունները: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու դատարանի կողմից:

13. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների

the Contract, as well as the acceptance act. If due to certain circumstances it's not possible to hand the mentioned documents directly to the Client, the documents shall be sent to the E-mail address mentioned in section 14 of the Contract, provided that the hard copy is delivered to the Client at the earliest opportunity. If this results to later submission of hard copies of the mentioned documents, the Services shall be considered to be timely.

11.2. Any other information and notices stipulated by the Contract shall be sent by E-mail to the E-mail addresses mentioned in paragraph 14 of the Contract. The agreements provided for in the contract may be reached by exchanging messages of the Parties through the mentioned E-mail addresses.

11.3. The information or notices sent by E-mail are deemed to be received on the day, when the E-mail has been sent, in case it was sent till 16:00 of that day. E-mails sent after 16:00 are deemed to be received on the next working day.

11.4. The E-mail communication between the Parties has the same force as written evidence and shall be interpreted in the context of the conditions prescribed by the +Contract.

12. SETTLEMENT OF DISPUTES

12.1. Any dispute arising out of or related hereto shall be settled by the Parties amicably through negotiation. Each Party shall give positive consideration to any proposal advanced by the other Party. Should the Parties fail to reach agreement, the dispute shall be settled in the manner prescribed by the RA legislation.

13. CONCLUSIVE PROVISIONS

13.1. This Contract shall be effective from the date of signing and shall expire upon

լրիվ կատարումը:

complete fulfillment of the obligations by the Parties.

13.2. Կողմերը հավաստիացնում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ իրավասությունները սույն Պայմանագիրը կնքելու համար, և որ նրանց կողմից պահպանվել են բոլոր ներքին ընթացակարգերը:

13.2. The Parties ensure that they have all the powers necessary for concluding this Contract and that they are in line with all internal procedures.

13.3. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

13.3. The law of the Republic of Armenia is applicable to this Contract.

13.4. Սույն Պայմանագիրը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

13.4. This contract shall be binding for the successors of the Parties.

13.5. Կողմերը պարտավորվում են տեղեկացնել միմյանց սույն Պայմանագրով նշված իրենց կոնտակտային տվյալների փոփոխման մասին՝ փոփոխությանը հաջորդող 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Այդ պարտականությունը չկատարած կողմը կրում է դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը:

13.5. The Parties shall inform each other about the changes of their contact information stipulated in section 14 of this Contract within 2 (two) working days after such changes take place. The party having failed to fulfill this obligation shall bear the risk of negative consequences thereof.

13.6. Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով և անգլերենով 2 (երկու) օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հակասությունների դեպքում գերակայում է հայերեն օրինակը:

13.6. This Contract is made in the Armenian and English languages in two copies that have equal legal force. In case of contradictions the Armenian version shall prevail.

14. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՈՒՐԲԱՆ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝
Հայաստան, 0070, Երևան
Ալեք Մանուկյան փող., 9 շենք, սեն.110

Էլեկտրոնային հասցե՝ info@urbanfoundation.am

Բանկային հաշիվը՝ 1570022191840100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 01549618

Նունե Ղազախեցյան
Գործադիր տնօրեն

Ստորագրություն

Կնիք

ԱՈՒԴԻՏՈՐ

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆՏՈՆ» ՓԲԸ

Իրավաբանական հասցե՝
0015, Երևան, Երևան պլազա բիզնես կենտրոն,
Գ. Լուսավորիչ փ. 9

Էլեկտրոնային հասցե՝ am.gt.com դոմեյն անունը
պարունակող ցանկացած հասցե

Բանկային հաշիվը՝ 1510045103850100
«Արարատբանկ» ԲԲԸ

ՀՎՀՀ՝ 00040569

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Ստորագրություն

Կնիք



14. ADDRESSES OF THE PARTIES

THE CLIENT

"URBAN" FOUNDATION FOR SUSTAINABLE DEVELOPMENT

Address:
Armenia, 0070, Yerevan
Alek Manukyan, 9 Building, Room 110

E-mail: info@urbanfoundation.am

Bank Account: 1570022191840100
"Ameriabank" CJSC

Taxpayer identification number: 01549618

Nune Ghazakhetsyan
Executive Director

Signature

Stamp

THE AUDITOR

"GRANT THORNTON" CJSC

Legal Address:
Yerevan Plaza Business Center,
9 Grigor Lusavorich street, Yerevan 0015,
Republic of Armenia

E-mail: Any E-mail address that belongs to
am.gt.com domain

Bank account: 1510045103850100
"Araratbank OJSC

Taxpayer identification number: 00040569

Armen Hovhannisyan
Director

Signature

Stamp